ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N: 3

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/49 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականի և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման (անհամապատասխանությունների շտկման) նիստի նիստի

ք. Երևան 27 օգոստոսի 2020թ.
ժամը. 10:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Կ. Գրիգորյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Գ. Խոսրովյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Անհամապատասխանությունների շտկման մասին

(Մ. Առաքելյան)

Ընդունել ի գիտություն՝

Հրավերով սահմանված կարգով, www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով «Սայտոն» և «Ադմիրալ» արմատուրային գործարան» ՍՊ Ընկերություններին ծանուցվել է՝ ներկայացնելու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի ճշգրտված տարբերակները:

Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող փաստաթղթերը:

2. Հայտերի գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/49» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում «Սայտոն» և «Ադմիրալ» արմատուրային գործարան» ՍՊ Ընկերությունների ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվել են հետևյալ

անհամապատասխանությունները. ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերում տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրերին: «Իմպիգռա» ՓԲ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Սայտոն» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:
2. 1-ին չափաբաժնի մասով «Ադմիրալ» արմատուրային գործարան» ՍՊ Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:
3. «Իմպիգռա» ՓԲ ընկերության հայտերը գնահատել բավարար:
4. 2-րդ չափաբաժնի մասով «Ադմիրալ» արմատուրային գործարան» ՍՊ Ընկերության հայտը գնահատել բավարար:
5. 2-րդ չափաբաժնի մասով՝
   - ընտրված մասնակից ճանաչել «Ադմիրալ» արմատուրային գործարան» ՍՊ Ընկերությանը՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:
   - 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Իմպիգռա» ՓԲ ընկերության ընկերությանը
6. Սույն ընթացակարգի նկատմամբ անգործության ժամկետ է կիրառվում 5 օրացուցային օր:
7. Անգործության ժամկետն ավարտվելուց հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.1. Բանակցությունների վարման մասին

Քանի որ 1-ին չափաբաժնի մասով «Իմպիգռա» ՓԲ ընկերության առաջարկած գինը գերազանցում է գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.2 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/49» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցեր և պատասխաններ չեն եղել::

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ բանակցությունների վարման նիստ հրավիրել բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Կ. Գրիգորյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան